ՀՐԱՋԵԱՑ ԱՃԱՌԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ ՎԻԵՆՆԱՑԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻՆ

Հրատարակող՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

21.

[Թաւրիզ, 30 օգ. 1923]

Մեծարգոյ Հայր խմբագիր
«Հանդէս Ամս.» ուսումնաթերթի,

Որովհետև ես այս առաւօտ պիտի մեկնիմ քաղաքէս, ուստի կխնդրեմ որ այլ ևս իմ այստեղի հասցէովս որևէ բան չուղարկէք։ Երէկ ուղարկեցի Ձեզ իմ վերջին ծրարս, որուն մէջ կէտնուին բոլոր մնացեալ թերթերն ու գրքերը։ Միայն մէկ գիրք կպակսի, որ է «Սէր և ստեղծագործութիւն», որ վերջերս տպուեցաւ։ Ասկէ վերջը թէ կուզէք քաղաքիս հրատարակութեանց հաւաքածոն կազմել, դիմեցէք Պր. Հայկ Ադէմեանին, Թաւրիզ, Haïk Adjémian, Tauris (Perse), որ միակ յանձնարարելի անձն է թէ իբրև սիրող գրական և ուսումնական հրատարակութեանց, թէ իբրև գրող և բանասէր, և թէ իբրև պարտաճանաչ և վստահելի անձ։ Արդէն նոյն իսկ այժմ այդ գրքի (Սէր և ստեղծ.) ստացման համար կրնաք դիմել իրեն և վստահ եղէք, որ ամենայն սիրով պիտի կատարէ Ձեր խնդիրքը։

Ի վերջոյ պարտականութիւն կը համարեմ յայտնելու նաև մէկ ուրիշ բան, որ Ձեզի անձնապէս պիտի հետաքրքրէ։ Ես Հանդէսի մէջ հրատարակած էի Թաւրիզի 150 ձեռագրաց ցուցակը։ Անկէ ի վեր հոս ստացուեր են զանազան նոր ձեռագրեր, որոնց թիւը հասեր է 90ի։ Ես խնդրեցի Պր. Ադէմեանէն, որ այդ նոր ձեռագրաց ցուցակն ալ կազմէ, որպէս զի հրատարակուի թերթիդ մէջ և յետոյ կազմէ երկրորդ հատոր իմ ցուցակիս։ Պ. Ադէմեանը կատարեց խնդիրս, նոյն իսկ օրինակելով ձեռագրաց նկարները։ Ամբողջ աշխատութիւնը պատրաստ է և չուտով, իմ յանձնարարութեամբս պիտի ուղարկէ Ձեզ։ Կխնդրեմ որ ըստ կարելւոյն հոգ տանիք չուտով հրատարակելու։ Միևնոյն ժամանակ պարոնը պիտի թղթակցի Ձեզ հետ մերթ ընդ մերթ ուղարկելով մասնաւոր յօդուածներ, որ նոյնպէս կխնդրեմ հրատարակել թերթիդ մէջ[1]։

30 օգոստ. 1923, *Թաւրիզ*

Ցարգ. Հ. Աճառեան

[1] Հայկ Ադէմեանը Հնում 1922ի վերջում և 1924 ու 1927 թթ. ունի չորս մանր յօդուած, բայց ոչ Թաւրիզի հայերէն ձեռագրերի ցուցակ։

22.

19 հոկտ. [1923]

Գերապատիւ Հ. Ակինեան,
Խմբագրապետ Հանդէսի,
Վիեննա.

Արդէն հասած և հաստատուած եմ քաղաքս։ Անչուշտ քանի մը տող Համալսարանի մասին կհետաքրքրէ Ձեզ։ — Համալսարանն ունի 5 բաժին. բժշկական, գրական–պատմական, գիւղատնտեսական, տեխնիկական, հասարակագիտական։ Ուսանողաց թիւն է 800, դասախօսացը՝ 62։ Ես կդասախօսեմ երկրորդին մէջ և նիւթս է «Հայերէնի համեմատական քերականութիւն», որ պիտի տևէ երեք տարի։ Արդէն 6 դասախօսութիւն ունեցայ։ Շատ գոհ եմ տեղէն և վիճակէս, նիւթապէս և բարոյապէս, որովհետև շատ յարմարութիւններ կան աշխատելու համար։

digitised by A.R.A.R.@

1922 թուի Հանդէսի № 8–9 դեռ չեմ ստացած։ Հանդէսները խնդրեմ այսուհետև ուղարկէք այս տեղի հասցէով, Աճառեան, Երևանի համալսարան. H. Adjarian, Université arm. Erivan (Arménie) Via Moscou։ Հայերէն հասցէ աւելցնելը օգտակար է. ցրուիչը դիւրութեամբ կհասցնէ նամակը։ Եթէ Հայոց գրերու յաջորդ արտատպութիւններէն ալ մէկ օրինակ ընկերացնէք՝ ուրախ կըլլամ։ Կսպասեմ նաև Նոր-Բայազէտի ձեռագրաց ցուցակին։

Նոր հրատարակութիւններն այստեղ շատ են. համալսարանը բոլոր գիտութեանց համար վիմատիպ հատորներ ունի. շատ բան տպուած է նաև դուրսը. այնպէս որ միայն ատոնք գտնելը մեծամեծ ծախուց կկարօտի[1], ուր մնաց 1914 թուէն այս կողմ տպուած գրքերն ու թերթերը բոլոր գտնելը և գնելը։ Եթէ որոշ գումար տրամադրէք, կրնամ առանձին ցուցակ և հաշիւ պահելով՝ գնել բոլոր հրատարակութիւնները, որչափ որ գտնեմ գրավաճառանոցներու մէջ։

Յարգանաց բարևներով՝
Հ. ԱՃԱՌԵԱՆ

Ց. Գ. Պարսկաստանէն խրկած ծրարներս ստացա՞ք ըստ ցուցակին՝ որ գրած էի ապահովեալ նամակիս մէջ։

Համալսարանի վարչութիւնը կյայտնէ Ձեզ իմ միջոցով՝ որ բոլոր իր անցեալ, ներկայ և ապագայ հրատարակութիւնները պիտի զրկէ Ձեզ, եթէ համաձայնիք դուք ալ ուղարկելու Ազգ. մատենադարանի[2] բոլոր հատորները սկիզբէն սկսած։

[1] Հմմտ. նամ. 18ի վերջաւորութեան մէջ այս մասին յայտնած յոյսը։

[2] Վիեննայի Մխիթարեան կամ ՀԱի առանձնատիպերի յայտնի և շատ գնահատելի շարքը որ առ 1923 թ. ունէր 101 փոքր հատոր («Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի», Վիեննա, 1972)։

23.

[9 յուն. 1924
Երևան]

Գերապատիւ
Հ. Ն. Ակինեան,
Եմբագիր Հանդէսի.

Գերապատիւ Հայր,

Գերմանիա մեկնող բժշկի մը միջոցով Ձեզի նամակ մը գրած էի երկու ամիս առաջ, յոյսս դեռ չեմ կորսնցուցած որ այդ նամակը հասնի ձեռքերնիդ[1]։

Երեք ամիս ու կէս է որ Երևան եմ, կդասախօսեմ համալսարանին մէջ հայ լեզուաբանութիւն և պարսկերէն լեզու։ Մեր, այսինքն գրական-պատմական ճիւղը ունի 120 ուսանող, մինչդեռ ամբողջ համալսարանի 5 ֆակուլտետներու ուսանողաց համագումարն է 1000[2], իսկ բոլոր դասախօսաց 61։

Հանդէսի բոլոր թուերը, որ խուճապին[3] մէջ կորսնցուցած էի, հոս գտայ գրադարանիս զանազան մեացորդներուն հետ։ Կխնդրեմ շարունակէք թերթին առաքումը՝ հետևեալ հասցէով. H. Adjarian, *Via Moscou*, Université arm. Erivan (Arménie)։ Եթէ հայերէն ալ աւելցուի, աւելի լաւ, որովհետև երկրին պետական լեզուն հայերէն է. ասկէ զատ ցրուիչը՝ որ օտար լեզու չգիտէ, դիւրութիւն կունենայ կարգալու և բերելու։ Ինձ կպակսին Հանդէսներու հետևեալ թուերը. 1922, թ. 8–9, 1923, սկսեալ 3 թուէն (ունիմ միայն 1 և 2)։ Կրնամ ըսել թէ ամբողջ Երևանի մէջ ես միակն եմ որ Հանդէս կստանամ. ամէնքը ինձ կը դիմեն և Հանդէս կուզեն. արդէն 1915–1922 թուերէն շատերը տարին, կարգացին և ողորմելի վիճակի մէջ վերադարձուցին։ 1914 թիւը պատերազմի պատճառով չեմ ստացած, ուրիշ տեղ ալ տեսած չեմ. չգիտեմ թէ կրնա՞մ այդ տարին ալ խնդրել Ձեզմէ։

digitised by A.R.A.R.@

Կ'ենթադրեմ որ Մրոյզ փանոմը տպուած ըլլայ[4]. պիտի խնդրէի որ մէկերկու օրինակ զրկէիք ինձ, որոնցմէ մէկը միայն կոկիկ կազմով մը կազմեալ Ձեր տպարանէն, կպահեմ զայն խնամքով։ Հեղինակի փառասիրութիւն։

Արդեօք տպուեցա՞ւ, աւելի ճիշտ հրատարակուեցա՞ւ Նոր-Բայազէտի ցուցակն[5], որմէ նոյնպէս օրինակ մը կազմեալ կխնդրեմ Ձեզմէ։

Այս բոլորը, ինչպէս նաև Հայոց գրերու արտատպութիւնը, սկսեալ 289 էջէն, կխնդրեմ խրկէք ապահովեալ ծրարով, որպէս զի անկորուստ կերպով ձեռքս հասնի։

Առաջարկած էիք հաւաքել հոս հրատարակուած թերթերն ու գրքերը. ստուգիւ ծանր գործ և կարօտ մեծամեծ ծախուց, որովհետև նոյն իսկ խմբագրութիւնները իրենց թերթերէն օրինակ մը չունին։ Այսքան ծախք իմ կարողութենէս վեր է, որովհետև այստեղ նոյն իսկ Պարսկաստան ստացած ռոճիկիս հազիւ կէսը կստանամ[6]։

Թերթերու հաւաքման մասին խօսեցայ նաև Սենեքերիմ Տէր-Յակոբեանին[7] և Մելիք-Օհանջանեանին[8]. բայց անոնք ալ իրենք իրենցմէ նոր բան մը չեն կրնար աւելցնել։

Սպասելով խնդրանացս շուտափոյթ առաքման,

Ձերդ յարգանօք՝
Հ. ԱՃԱՌԵԱՆ

Երևան
1924 յունվ. 9

[1] Աճը երեք և կէս ամիս էր, որ Երևանում էր. դա քիչ էր շրջապատող միանգամայն նոր կացութիւնը ըմբռնելու և բան նոր կենցաղի վարուելու համար։

[2] Հմմտ. Նախորդ նամակի 100-ի հետ։ 1923 թ. հոկտեմբերի 20-ից Երևանի համալսարանը կոչուել է «ՀՍԽՀ Պետական Համալսարան». ունեցել է հասարակագիտական, պատմագրական, գիւղատնտեսական, տեխնիկական, բժշկական ֆակուլտետները (եամ բաժինները)։ 1923-24 ուս. տարուայ ընդունելութեան քննութիւնների յանձնաժողովի մէջ եղել է նաև Աճը։ Այդ տարում ուսանողութեան թիւը եղել է 938, ըստ որում 613 տղայ, 325 աղջիկ (ըստ Լ. Գ. Ղարիբջանեանի նշ. աշխատութեան)։

[3] Տե՛ս նամ. 18։

[4] ՀԱ. 1923, էջ 241-256։

[5] Առանձնատիպ 1924-ին։

[6] Ռոճիկի մասին գանգատը անզգուշութիւն էր, որին սովոր չէր գեռ ազատամիտ և ազատախոհ Աճը։

[7] Սենեքերիմ Տէր-Յակոբեանը 1925-ին եղել է Էջմիածնի Պետական ձեռագրատան վարիչը, որ ամէն դիւրութիւն ընծայել է Հ. Ն. Ակինեանին, երբ սա այնտեղ ուսումնասիրել ու ցուցակագրել է հայերէն ձեռագրեր (տե՛ս նամակ 24, ծան. 1)։

[8] Կարապետ Մելիք-Օհանջանեան (1893-1970), Երևանի պետ. համալսարանի առաջին դասախօսներից (1921-29), պրոֆեսոր, մեծավաստակ բանասէր, հայագէտ և արևելագէտ, թարգմանիչ (սովորել է Գերմանիայում), գիտութիւնների վաստակաւոր գործիչ, ակադեմիկոս, բայց «1937 թուականին Կ. Մելիք-Օհանջանեանը անհիմն կերպով ենթարկուում է ռեպրեսիայի» (Լ. Գ. Ղարիբջանեան, Երևանի պետական համալսարանը, էջ 274)։

7. «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ»Ի ՏԵՂԱԿԱԼ ԽՄԲԱԳՐԻՆ[1]

24.

[26 դեկ. 1928, Երևան]

Գերապատիւ
Հայր Խմբագիր
«Հանդէս» ուսումնարանի.

Մեր մշանջենական մտաւոր եղբայրական յարաբերութիւնները՝ որոնք սկսեալ 1896 թուէն[2], այն է 32 տարիէ ի վեր կչարունակուէին, Հ. Ակինեանի բացակայութեան պատճառաւ ընդհատուեցան։ Մէկ տարիէն աւելի է որ Հանդէս ստացած չեմ. և ասիկա մտաւոր որբութիւն է մեզ համար, որովհետև Հայագիտութեան միակ ու-

digitised by A.R.A.R.@

սու�թերթը Հանդէսն է։ Կփափաքէի որ նոր տարիէն սկսեալ նորէն սկսէինք մեր թղթակցութիւնները։ Ամէնէն առաջ սիրով կողջունեմ զվերապատուելին Հայր Տաշեան և զՀ. Դ. Մէնէվիշեան և զայլս յեղբարց, որք իցեն ի մարմնի։

Երկրորդ՝ կխնդրեմ որ Հանդէս Ամսօրեայի 1927. թիւ 9–12 և 1928, թիւ 1–12 համարներէն մէյմէկ օրինակ լաւ ծրարած և ապահովեալ դրկէք իմ հասցէով՝ H. Adjarian, Université armén. Erivan (Arménie)։

Երրորդ. լսեցի որ իմ «Հայոց գրերը» վերջացած է. կխնդրէի որ 3–4 օրինակ անկազմ ուղարկէիք նոյն հասցէով։

(Լսած եմ նոյնպէս որ Միաբանութիւնդ Monumenta անունով[3] խոշոր հատորեակ մը հրատարակած է. արդէն գրեցի Լայփցիկ Լորենցին և օրինակ մը պահանջեցի. չուտով կստանամ)։

Չորրորդ. Վիեննայի Միաբանութիւնդ չորս օրինակ բժանորդ գրուած էր իմ Աւտատսկոն բառարանիս, որմէ զատ օրինակ մըն ալ ինձմէ ձրիաբար նուէր կը ստանար։ Հ. Ակինեանը ստացած է Բ հատորի մինչև 10դ պրակը, որ է 1000 էջ. անկէ ապին մնաց։ Հրատարակուած է Բ հատոր մինչև վերջ և Գ հատորէն 6 պրակ, ընդ ամէնը՝ $9^1/_2$ պրակ (950 երես), որ արժէ $9^1/_2$ ռուբլի. — 4 օրինակի համար 38 ռ., չհաշուելով անծանօթ ճամբու ծախքը։ Խնդրեմ ստացման համար կարգադրութիւն մը ընէիք։

Հինգերորդ. Հ. Ակինեանը Զեզի գրած պիտի ըլլար իմ «Պատմութիւն Եղիա բանանայի» աշխատութեան արտատպութեան մասին՝ յԱրարաս ամսագրէ. այս մասին ի՞նչ կարգադրութիւն եղած է. թերևս և կատարուած վերջացած է. այս մասին ալ տեղեկութիւն մը կ'ուզէի[4]։

Ակնդէտ սպասելով նամակիս պատասխանին և կատարման խնդրանացս,

հանդերձ չնորհաւորութեամբք նորոյ տարւոյ

եմ և մնամ ն. ծ.

Հ. ԱՃԱՌԵԱՆ

1928 դեկտ. 26, Երևան.

[1] ՀԱի խմբագիր Հ. Ն. Ակինեանը Սով. Հայաստանի կառավարութեան յատուկ արտօնութեամբ 1924ի մարտին մեկնում է Սովետական Միութիւն, որպէսզի հայերէն ձեռագրեր ուսումնասիրի, վանքի մատենադարանի համար գրքեր, թերթեր ու ձեռագրեր հայթայթի. Մխիթարեան վարժարան կամ որբանոց բացի Սով. Հայաստանում (տես նրա «Համառօտ տեղեկագիր գիտական ուղևորութեանս ի Հայս», ՀԱ. 1929, էջ 193–208, ապրիլ)։ «Վերջին կէտս, — գրել է նա, — որ միամիտ առաջարկութիւն մըն էր, մերժեց Խորհ. Կառավարութիւնն իմանալի պատճառներով։ Հայ. ձեռագրեր ուսումնասիրել և ցուցակագրել է Մոսկուայի նախկին Լազարեան ճեմարանում, Երևանում և Էջմիածնում, ձեռք է բերել 10.000 գիրք, թերթ և (զարմանալիօրէն) ձեռագրեր, որոնց 7 արկղներից 2ը առաքում է վանք փոստով։ 1928ի ապրիլի 28ին կալանաւորում է. բանտում հարցաքննում է Երևանում, Թիֆլիսում և Մոսկուայում 9 ամիս, սակայն առանձին քաղաքավարութեամբ։ Մեղադրում է հմայական բժշկութեան պատրուակով։ Երևանում պաշտօնապէս ունեցել է մատուռ, ուր պատարագել է հայ կաթողիկէների համար։ 1929ի փետրուարին Մոսկուայից ազատ է արձակւում և մեկնում է Վիեննա, միւս 5 արկղները ստանալու խոստումով։

[2] ԱՀի 1ին ուսումնասիրութիւնը (Ձեռագրացուցակ) լոյս է տեսել այդ թուականին։

[3] «Monumenta armenologica, Ցիւռասակարան Հանդէս Ամսօրեայի բառասնամեակի նուիրուած օտարազգի հայագէտների», Վիեննա, 1927, 188 էջ։

[4] Տե՛ս նամ. 4. ծան. 1։

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

(Մնացեալը յաջորդիւ՝ 10)

digitised by A.R.A.R.@